լոր Հայերի մէջ. ազգային գործերի վրայ Նրանց իշխանները մեծ ազդեցութիւն ունէին. կաթուղիկոսներից բռնած մինչեւ հասարակ Հայերը նեղութեան ժամանակ ջուղայեցիներին էին ապաւինում: Իշխանների մէջ ալ անուանի էին խոջա Սաֆար, խոջա Խաչիկ, Խոջա Նազար եւ այլք. "Խոջա" բառն արեւելքում մինչեւ այժմ եւս տրւում է հարուստ եւ պատուաւոր ու հռչակ ունեցող վաճառականներին:

Ցեանենք այժմ ինչ դրութեան մէջ էր հայրապետական գահն այդ միջոցին: Ամբողջ հայ ազգի պատմական կեանքի մէջ չկայ այնքան վշտերի, տառապանքների եւ չարչարանքի մի տեսարան, որպիսին ցոյց է տալիս մեզ Էջմիածնի կաթուղիկոսական աթոռը: Ս. Գրիգորի յաջորդներից շատերն իրենց վարուց եւ առաքինութեան հետ կցել են համարեա միշտ եւ կենդանի նահատակների անունը:

Մեր պատմութեան ժամանակ Էջմիածինը բոլորովին անշքացած եւ թափուր դրութեան մէջ էր: Օսմանցւոց բդեշխների եւ հարկապահանջների լուծն այնքան անագորոյն եւ անտանելի էր դարձել, որ Դաւիթ Ե. կաթուղիկոսը չարաչար նեղուելով բդեշխների հարկապահանջութիւնից, որոնք պահանջում էին նրանից, իբրեւ ազգի գլխից, շատ դանձ, այլ եւս ճար չգտնելով, իրեն կաթուղիկոսակից ընտրեց 1593 թուին Մելքիսէթ Եպիսկոպոսին, որպէս զի երկուսը միասին ժողովարարութիւն անեն եւ աթոռի պարտքերը վճարեն: Հետզհետէ պարտքը դիզ-